Հավելված N1
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
հայկական պետական ինստիտուտ» հիմնադրամի
ռեկտորի 2018 թվականի
օգոստոսի 27-ի N 04 հրամանի

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ ինստիտուտ) ուսանողական նպաստների և պետական կրթաթոշակների հատկացման կարգը սահմանում է ինստիտուտում ուսման վարձավճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման ձևով ուսանողական նպաստների հատկացման և պետական կրթաթոշակների տրամադրման կարգն ու պայմանները:

2. Սույն կարգի մշակման և ընդունման համար հիմք են ընդունվել «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի դրույթները:

II. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3. Ուսանողական նպաստը փոխհատուցում է (լրիվ կամ մասնակի) ուսանողի ուսման վճարը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասում նախատեսված միջոցների, ինստիտուտի միջոցների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին:

4. Պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրամադրում է.

ա) մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր գնահատականներ ունեցող ուսանողներին՝ մրցութային կարգով.

բ) օրենքով նախատեսված հետևյալ սոցիալական խմբերին՝

I. առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին և նրանց թվին պատկանող անձանց՝ համաձայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի («Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք են համարվում 18-23 տարեկան այն անձինք, որոնց ծնողները (կամ միակ ծնողը) մինչև նրանց 18 տարին լրանալը մահացել են, զրկվել են ծնողական իրավունքներից, ճանաչվել են անգործունակ, խուսափել են երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ճանաչվել են մահացած, անհայտ բացակայող կամ անհայտ են»),,

II. 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց՝ համաձայն «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

III. ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի

հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողներին, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողների մինչև 27 տարեկան զավակներին՝ համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.

գ) պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին:

Առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին և նրանց թվին պատկանող անձանց, զոհված զինծառայողի երեխա-ուսանողներին ուսանողական նպաստներ տրամադրվում են 1-ին կուրսից մինչև ծրագրի ավարտը, իսկ 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած ուսանողներին ուսանողական նպաստները համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում տրվում են 1-ին կուրսի սկզբում և վերանայվում յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում:

5. Սույն կարգի 4-րդ կետի ա)-ին ենթակետում նշված անձանց ուսանողական նպաստներ հատկացնելու գործընթացն իրականացվում է յուրաքանչյուր տարվա օգոստոսի 15-ից մինչև սեպտեմբերի 15-ը ընկած ժամանակահատվածում:

6. Սույն կարգի 4–րդ կետի բ)-րդ ենթակետի I-ին պարբերությունում նշված անձանց նպաստները ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ ձևակերպվում և տրամադրվում են առաջին կուրսի սկզբում և պարտադիր վերանայվում յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում՝ հաշվի առնելով առաջադիմությունը: Այդ անձինք զրկվում են նպաստ ստանալու իրավունքից, եթե քննաշրջանի արդյունքներով ցուցաբերում են ցածր կամ անբավարար առաջադիմություն:

7. Սույն կարգի 4–րդ կետի բ)-րդ ենթակետի II-րդ և III-րդ պարբերություններում նշված անձանց նպաստները համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում ձևակերպվում են և տրամադրվում առաջին կուրսի սկզբում և պարտադիր վերանայվում յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում: Այդ անձինք զրկվում են նպաստ ստանալու իրավունքից, եթե բժշկասոցիալական վերափորձաքննության արդյունքներով չեն ճանաչվում հաշմանդամ:

8. Ընդհանուր մրցույթից դուրս, պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հատկացված անվճար տեղերի հաշվին ընդունված ուսանողները՝ որպես նպատակային ուսուցմամբ ընդունվածներ, օգտվում են իրենց արտոնությունից մինչև ուսումնառության ավարտը:

9.Պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրում է յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից սահմանված ուսանողի միջին որակական գնահատականի նվազագույն շեմը հաղթահարած և ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից յուրաքանչյուր տարի սահմանվող անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող հետևյալ խմբերին.

1) մինչև 5 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 50 տոկոսի չափով.

2) 5-10 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 60 տոկոսի չափով.

3) 10-15 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 70 տոկոսի չափով.

4) 15-20 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 80 տոկոսի չափով.

5) 20-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 100 տոկոսի չափով:

10. Ինստիտուտ սահմանված կարգով առաջին կուրս ընդունված և ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ուսանողներին՝ ընդունելության մրցութային քննությունների արդյունքում համապատասխան միավորի շեմը հաղթահարելու դեպքում ուսանողական նպաստները տրվում են ըստ սույն կարգի 9-րդ կետի սահմանված չափերի և 11-րդ կետի սահմանված ընթացակարգով:

11. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում ստանալու նպատակով ուսանողն իր ընտանիքի անապահովության միավորի վերաբերյալ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնից տեղեկանքը յուրաքանչյուր տարի ներկայացնում է համապատասխան դեկանատ մինչև տվյալ տարվա սեպտեմբերի 10-ը:

12. Ըստ կրթական աստիճանների մասնագիտությունների համապատասխան միավորի (մագիստրոսի կրթական աստիճանի դեպքում՝ միջին որակական գնահատականի) նվազագույն շեմերը յուրաքանչյուր տարի սահմանում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը:

13.Պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհա-տուցում տրամադրում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշման N 1 հավելվածում ներառված սոցիալական աջակցություն ստացող համայնքներում, ինչպես նաև Տավուշի մարզի Բերդի համայնքում հաշվառված և վերջին հինգ տարում մշտապես բնակվող ու տվյալ համայնքի հանրակրթական ուսումնական հաստատությունն ավարտած և Հայաստանի Հանրապետության պետական կամ հավատարմագրված ոչ պետական բուհերի համապատասխան ուսուցման ձևերով (առկա, հեռակա) բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններով (այդ թվում՝ անընդհատ ու ինտեգրացված կրթական ծրագրերով) ուսանողների հետևյալ խմբերին՝

ա) մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով գերազանց առաջադիմություն ունեցողներին՝ ուսման վճարի 60 տոկոսի չափով.

բ) անկախ առաջադիմությունից՝ ուսման վճարի 30 տոկոսի չափով:

14.Հայաստանի Հնարապետության կառավարությունը յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով բուհերի համար նախատեսված միջոցների սահմաններում, ըստ ինստիտուտի մասնագիտությունների, բաշխում է պետության կողմից տրվող ուսանողկան նպաստների քանակը, որը տեղափոխվում է կուրսից կուրս:

14.1.Առաջին կուրսում ուսանողական նպաստի ձևով վճարի ձևով ուսման վճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցում տրամադրվում է ՀՀ պետական բուհերի

ընդունելության կանոններով սահմանված կարգով ինստիտուտ և ընդունված ուսանողներին:

14.2.Հաջորդ կուրսերում ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրվում է նույն կուրսում մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն (միջին որակական գնահատականի (ՄՈԳ) հարյուրերորդականի ճշտությամբ) ունեցող ուսանողներին՝ մրցութային հիմունքներով:

14.3.Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) ընդունված արական սեռի ուսանողներն ուսումնառության ամբողջ ընթացքում, անկախ փոխատեղման արդյունքից, օգտվում են պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքից:

14.4.Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունքից օգտվող ուսանողի կողմից հարգելի պատճառով ուսումնառությունն ընդհատելու դեպքում ազատված ուսանողական նպաստը նույն կուրսում տվյալ ուսումնական տարում չի օգտագործվում և հետագայում ավելացվում է այն կուրսի տվյալ ուսումնական տարվա ուսանողական նպաստներին որտեղ ուսանողը վերականգնում է իր ուսանողական իրավունքները:

14.5. Ոսման վճարը մասնակի փոխհատուցող ուսանողական նպաստների չափը սահմանում է և այն տրամադրելու գործառույթներն իրականացնում է ինստիտուտը:

15.Ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքում միևնույն պայմանների դեպքում հավասար միավորներ ունեցող երկու և ավելի ուսանողների պարագայում՝ երկրորդ կուրսում առավելությունը տրվում է առաջին կուրսի վերջին կիսամյակի քննաշրջանի արդյունքում առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, հաջորդ կուրսերում՝ նախորդ ուսումնական տարվա, իսկ վերջինիս հավասարության դեպքում՝ դրան նախորդող ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին:

16.Ինստիտուտը վճարովի համակարգում սովորող ուսանողական համակազմի առնվազն տասը տոկոսին՝ ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն յոթ տոկոսի չափով, բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորողներին առանձին-առանձին, ուսանողի սոցիալական վիճակի և բարձր առաջադիմության արդյունքների (82 և բարձր ՄՈԳ) հաշվառմամբ (յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի համար միջին որակական գնահատականի՝ ՄՈԳ շեմը սահմանվում է ինստիտուտի ռեկտորի հրամանով), իր միջոցների հաշվին իրականացնում է հետևյալ անձանց ուսման վարձի՝ ուսանողական նպաստի ձևով մասնակի փոխհատուցում համապատասխան փաստաթղթերի ներկայացման դեպքում.

1) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության 0-30 միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ 30 տոկոս.

2) 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ (որոնց ծնողներից մեկը մինչև նրանց 18 տարին լրանալը մահացել է, զրկվել է ծնողական իրավունքներից, ճանաչվել է անգործունակ, խուսափել է երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից, ինչպես նաև օրենքով սահմանված

կարգով ճանաչվել է մահացած, անհայտ բացակայող կամ անհայտ է) կամ միածնող ուսանողներին՝ 50 տոկոս.

3) մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին՝ 50 տոկոս.

4) երեք և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին՝ 30 տոկոս,

5) Ինստիտուտը վճարովի համակարգում սովորող և մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և 72 և բարձր ՄՈԳ ունեցող ուսանողներին, ում զինվորական գրքույկի 7-րդ բաժնի «Հատուկ նշումներ» մասում առկա է հետևյալ գրառումը՝ «Մասնակցել է ՀՀ (կամ ԼՂՀ) սահմանների պաշտպանությանը (նշելով ժամկետը)», հաստատված զորամասի հրամանատարի ստորագրությամբ և զորամասի զինանշանային կնիքով, իր միջոցների հաշվին իրականացնում է ուսանողական նպաստի ձևով մասնակի փոխհատուցում համապատասխան փաստաթղթերի ներկայացման դեպքում՝ 30 տոկոս:

6) հեռավոր, լեռնային և սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների երեխա-ուսանողներին՝ 30 տոկոս.

7) ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված երկու կիսամյակ անընդմեջ առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, որոնք ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցման համար անցկացված փոխատեղման մրցույթի արդյունքում զրկվել են նպաստի իրավունքից մինչև 0.1 միավոր տարբերությամբ՝ 50 տոկոս.

8) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ, այդ թվում՝ հաշմանդամ ազատամարտիկ ծնող ունեցող ուսանողներին՝ 30 տոկոս.

16.1. Ինստիտուտի կողմից կիրառվող ուսման վարձի ուսանողական նպաստի ձևով մասնակի փոխհատուցման տարակարգեր.

9) վճարովի ուսուցման համակարգում երկու և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին՝ 30 տոկոս.

10) ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված չորս կիսամյակ անընդմեջ գերազանց (90 և բարձր ՄՈԳ) առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին՝ 50 տոկոս.

11) ինստիտուտում առնվազն 10 տարվա անընդմեջ աշխատանքային ստաժ ունեցող հիմնական աշխատող և հիմնական աշխատողի երեխա ուսանողներին՝ 30 տոկոս.

12) աշխարհի, եվրոպայի առաջնություններում 1-ից 3-րդ տեղերը գրաված ուսանողներին (բոլոր տարիքային խմբերում)՝ 50տոկոս

13) աշխարհի, եվրոպայի առաջնություններում 4-ից 6-րդ տեղերը գրաված ուսանողներին (բոլոր տարիքային խմբերում)՝ 30 տոկոս

14) առանձնահատուկ դեպքերում, ինստիտուտի ռեկտորի որոշմամբ այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին՝ 30 տոկոս:

17. Ուսման վճարը մասնակի փոխհատուցող ուսանողական նպաստների տարակարգերն ու չափերը («Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն) սահմանում և այն տրամադրելու գործառույթներն իրականացնում է Ինստիտուտը: Դիմումների

քննարկումը կազմակերպում և համակարգում է յուրաքանչյուր ֆակուլտետի դեկանը՝ ֆակուլտետի խորհրդում:
18. Ուսման վճարի մասնակի փոխհատուցման մասին դիմումներն ընդունվում են տվյալ ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ուսումնական պարապմունքների սկզբին նախորդող և հաջորդող երկու շաբաթների ընթացքում:
19.Նպաստառու ուսանողի սոցիալական վիճակի փոփոխության դեպքում ինստիտուտի կողմից տրամադրվող ուսանողական նպաստը կարող է փոփոխվել:
20. Երկու և ավելի կարգավիճակների համապատասխանող ուսանողների համար կիրառվում է մասնակի փոխհատուցման առավելագույն չափ նախատեսող դրույթը:
21.Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցումից ուսանողը կարող է օգտվել սահմանված միջին որակական գնահատականի (ՄՈԳ) շեմը հաղթահարելու դեպքում:
22. Անհարգելի պատճառներով (անբավարար գնահատական (չստուգված) ստանալու կամ անհարգելի պատճառով քննությանը (ստուգարքին) չներկայանալու դեպքերում) ակադեմիական պարտքերի մարման շրջանում քննություններ (ստուգարքներ) հանձնած ուսանողները, ինչպես ուսման ուսման վարձավճարի պարտք ունեցող ուսանողները ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից չեն օգտվում:
23. Բակալավրիատի և մագիստրատուրայի (առկա, հեռակա) ուսումնառության համակարգերում սովորող առաջին կուրսի ուսանողները ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել առաջին կուրսի երկրորդ կիսամյակից:
24. Ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում տրամադրվում է նախորդ կիսամյակի առաջադիմության ամփոփ արդյունքների (միջին որակական գնահատականի (ՄՈԳ) հիման վրա:
25. Մագիստրոսական կրթությունը բակալավրական կրթությանը հաջորդող շարունակական կրթություն է, և մագիստրատուրայում սույն կարգի դրույթների կիրառման ժամանակ հիմք են ընդունվում բակալավրիատի վերջին տարվա առաջադիմության ցուցանիշները, իսկ դրանց հավասարության դեպքում՝ նախորդող տարիների առաջադիմության արդյունքները:

Եթե վերոնշյալ կարգով համեմատության դեպքում ևս ուսանողների առաջադիմության միջին ցուցանիշները հավասար են, ապա ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման դեպքում առավելությունը տրվում է ընդհանուր մասնագիտական և մասնագիտացման դասընթացների քննություններից առավել բարձր ընդհանուր միջին միավոր ունեցող ուսանողին: Նշված ցուցանիշի հավասարության դեպքում հաշվի են առնվում.

1) բակալավրիատի ուսանողների համար՝ նշված դասընթացներից յուրաքանչյուրից ստացված միջին միավորները՝ ըստ վերոնշյալ հերթականության.

2) մագիստրատուրայի ուսանողների համար՝ մասնագիտացման առարկաներից ստացված միջին միավորները:

26. Հեռակա ուսումնառության համակարգում սովորող ուսանողների դեպքում՝ առաջին կուրսի ուսանողները ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել առաջին կուրսի երկրորդ կիսամյակի ուսումնական պարապմունքները փաստացի սկսելուց հետո՝ երեք շաբաթվա ընթացքում դիմում համապատասխան դիմում և անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում:

27.Վերականգնված, այլ բուհերից, ինստիտուտի այլ մասնագիտություններից կամ հեռակա ուսումնառության համակարգից առկա, կամ առկա ուսումնառության համակարգից հեռակա ուսումնառության համակարգ տեղափոխված ուսանողները, ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել ինստիտուտում տվյալ մասնագիտությունում, մեկ կիսամյակ սովորելուց հետո:
28. Ուսման վճարի մասնակի փոխհատուցումը վերաբերում է միայն ընթացիկ ուսումնական տարվա տվյալ կիսամյակին:
29. Ուսման վճարի մասնակի փոխհատուցման իրավունք ունեցող ուսանողը կորցնում է արտոնությունը.
1)եթե տվյալ կիսամյակի (տարվա) ուսման վճարը կիսամյակի (տարվա) առաջին ամսվա ընթացքում չի մուծել.
2)ունի ուսման վարձավճարի պարտք.
3)եթե նախորդ ուսումնական տարում (քննաշրջանում՝ առանց վերահանձնումների) ունեցել է ակադեմիական պարտք:
30.Ըստ առաջադիմության՝ ՄՈԳ-ի, ձևավորվում է տվյալ կուրսի տվյալ մասնագիտության ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունք ունեցող ուսանողների ցուցակը:
31.Ցուցակները հաստատվում են ֆակուլտետների խորհրդի նիստում: Կազմվում է երկու օրինակից բաղկացած արձանագրություն, որը ստորագրվում է ֆակուլտետի խորհրդի նախագահի կողմից:
32.Ցուցակները քննարկվում են ռեկտորատի նիստում և հաստատվելուց հետո հրամանագրվում ռեկտորի կողմից: Հրամանագրված ցուցակները հասցվում են ուսանողներին ի գիտություն՝ հրապարակման ճանապարհով (փակցվում են յուրաքանչյուր ֆակուլտետի հրամանների և հայտարարությունների ցուցատախտակում և հրապարակվում հիմնադրամի պաշտոնական կայքում):
33.Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցման հրամանում պարտադիր նշվում է նպաստի տրման ժամկետը տվյալ տարվա սեպտեմբերի 1-ից մինչև հաջորդ տարվա օգոստոսի 31-ը:
34.Ինստիտուտի կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցման հրամանում պարտադիր նշվում է մասնակի փոխհատուցման տարակարգերը և չափը:
35.Ցուցակներում անճշտություններ, վրիպակներ, սխալներ, ինչպես նաև սույն կանոնակարգի դրույթների խախտումներ հայտնաբերելիս ռեկտորատը իրավասու է տվյալ մասնագիտության նպաստառուների ցուցակը հետ վերադարձնել՝ նոր մրցույթ կազմակերպելու համար: Անճշտություններ, վրիպումներ, սխալներ և կանոնակարգային խախտումներ թույլ տված անձինք ենթակա են կարգապահական պատասխանատվության:
36.Հարգելի պատճառով ուսումնառությունն ընդհատած (ժամկետային զինծառայության զորակոչվելու, առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու, հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի, կամ ՀՀ և օտարերկրյա պետությունների հետ կնքված միջպետական պայմանագրերի հիման վրա օտարերկրյա պետություններում ուսումնառությունը շարունակելու դեպքերում) ուսանողը վերականգնվելիս պահպանում է նախկինում ունեցած ուսանողական նպաստ ստանալու իրավունքը (Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ուսանողական նպաստ

ստացողների ընդհանուր թվաքանակի շրջանակներում): Այս հանգամանքը պարտադիր նշվում է ուսումնառության ընդհատման մասին հրամանում:
37.Ուսանողական նպաստներ տալու գործընթացի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը:

III. ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

38. Սույն բաժնի դրույթները գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ ըստ բարձրագույն ուսումնական հաստատությունների տվյալ տարվա պետական բյուջեով պետական կրթաթոշակների թիվը և չափը հաստատելու մասին համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելուց հետո:
39.Պետական կրթաթոշակը պետական ֆինանսական խրախուսանք է: Ուսանողներին պետական կրթաթոշակ է տրվում գերազանց և լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարքագիծ դրսևորելու համար:
40. Ուսանողների հասարակական ակտիվությունը բնութագրող ցուցանիշներն են՝

ա) մասնակցությունը ֆակուլտետի և բուհի ուսանողական, հասարակական աշխատանքներին.

բ) զեկուցումներ, ռեֆերատներ, հրատարակած աշխատանքներ (գիտական ամսագրերում և զանգվածային լրատվության միջոցներում).

գ) մասնակցությունը միջբուհական, քաղաքային, հանրապետական և միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին, ուսանողական գիտական նստաշրջաններին, ուսանողական շինարարական ջոկատների աշխատանքներին.

դ) այլ հասարակական և ստեղծագործական նախաձեռնություններ՝ բուհի հայեցողությամբ:

41.Սույն կարգի իմաստով ուսանողների պատշաճ վարքագիծը ինստիտուտի ներքին կանոնների պահպանումն է: Նշված կանոնների խախտման դեպքում ուսանողի նկատմամբ կիրառված կարգապահական տույժը կարող է հիմք ծառայել պետական կրթաթոշակից զրկելու համար:
42.Հայաստանի Հանրապետության կառավարությունը, յուրաքանչյուր տարի, Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով բարձրագույն ուսումնական հաստատությունների համար նախատեսված միջոցների սահմաններում, ըստ բուհերի, հաստատում է պետական կրթաթոշակների թիվը և չափը:
43.Պետության կողմից կրթաթոշակ տրվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող ուսումնական հաստատությունների ուսանողներին:
44.Ուսանողներին պետական կրթաթոշակի տրամադրումը վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացիկ կիսամյակի ավարտին:

Յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի ավարտին սույն կանոնակարգում նշված պայմանների պահպանման պարագայում պետական կրթաթոշակի հատկացումը վերահաստատվում է:

Թվարկված պայմանները չապահովելու դեպքում ուսանողը զրկվում է պետական կրթաթոշակից: Ազատված պետական կրթաթոշակները մրցութային կարգով հատկացվում են տվյալ մասնագիտության այլ ուսանողների:

Մրցույթի անցկացումից հետո տվյալ մասնագիտությունում ազատ պետական կրթաթոշակներ առաջանալու դեպքում դրանք կարող են վերաբաշխվել ֆակուլտետի մյուս մասնագիտությունների վրա

Նախատեսված պայմանների պահպանման պարագայում պետական կրթաթոշակի հատկացումը վերահաստատվում է:

45.Պետական կրթաթոշակից զրկված ուսանողը կարող է ընդգրկվել ուսումնական նպաստառուների համակարգում՝ սույն կարգում ամրագրված պահանջները բավարարելու դեպքում:

46.Հարգելի պատճառով ուսումնառությունն ընդհատած (ժամկետային զինծառայության զորակոչվելու, առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու, հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի, կամ ՀՀ և օտարերկրյա պետությունների հետ կնքված միջպետական պայմանագրերի հիման վրա օտարերկրյա պետություններում ուսումնառությունը շարունակելու դեպքերում) ուսանողը վերականգնվելիս պահպանում է նախկինում ունեցած ուսանողական նպաստ ստանալու իրավունքը (Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ուսանողական նպաստ ստացողների ընդհանուր թվաքանակի շրջանակներում): Այս հանգամանքը պարտադիր նշվում է ուսումնառության ընդհատումը ձևակերպող հրամանում:

47.Առանց ծնողական խնամքի մնացած սովորող երեխաներին ինստիտուտը վճարում է կրթաթոշակ՝ սահմանված կրթաթոշակի 150 տոկոսի չափով, պետական բյուջեի միջոցների հաշվին՝ համաձայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի:

48. Ինստիտուտն իրավասու է սեփական և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին սահմանել անվանական կրթաթոշակներ:

Անվանական կրթաթոշակները տրվում են մրցութային կարգով և վերանայվում յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտից հետո: Ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ավարտից հետո ինստիտուտի բոլոր մասնագիտությունների ուսանողներից խնամարկուները (կուրսղեկները) և ֆակուլտետի ուսանողական խորհրդի ներկայացուցիչը ընտրում են յուրաքանչյուրը մեկ թեկնածու և ներկայացնում մասնագիտական ամբիոն՝ ամբիոնի նիստում քննարկելու համար:

Անվանական կրթաթոշակի վերաբերյալ ռեկտորատի որոշումը կենսագործվում է ռեկտորի հրամանով:

VI.ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

49.Սույն կարգը ընդունվում, նրանում լրացումներ կամ փոփոխություններ կատարվում են ինստիտուտի ռեկտորատի որոշմամբ:

50.Սույն կարգը ուժի մեջ է մտնում 2018թվականի սեպտեմբերի 01-ին:

*Ուժը կորցրած ճանաչել ինստիտուտի գիտական խորհրդի՝ 19.05.2017թվականի նիստում հաստատված ՝ «Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի ուսանողական նպաստների և պետական կրթաթոշակների հատկացման կարգը